

ՀՀ Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի  
նիստ

ՕՐԱԿԱՐԳ

03.03.2016թ.

12<sup>00</sup> Նիստի մեկնարկ: Բացման խոսք՝ մարզպետ, խորհրդի նախագահ  
Ա. Ղահրամանյան:

12<sup>15</sup> Օրակարգի ներկայացում և հաստատում:

12<sup>30</sup> Համայնքներում մշակութային, սպորտային և ժամանացային  
ծրագրեր իրագործելու վերաբերյալ հարցերի քննարկում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նիստի

03.03.2016թ.

ք. Արմավիր

Նիստը վարում էր ՀՀ Արմավիրի մարզպետ, Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահ Ա. Ղահրամանյանը, նիստին ներկա էին խորհրդի 20 անդամներից 16-ը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի երիտասարդության հարցերը համակարգող Գ. Մուրադյանը:

Օրակարգում ընդգրկված էր մեկ հարց՝

1. Համայնքներում մշակութային, սպորտային և ժամանացային ծրագրեր իրագործելու վերաբերյալ հարցերի քննարկում:

Խորհրդի նիստի օրակարգը ներկայացվելուց և հաստատվելուց հետո, խորհրդի անդամները հանդես եկան համայնքներում մշակութային, սպորտային և ժամանացային ծրագրեր իրագործելու վերաբերյալ հարցերի հետ կապված առաջարկություններով:

Մրգաշատ գյուղական համայնքի ոչ պետական հատվածի ներկայացուցիչ Վարդան Վարդանյանը առաջարկեց երիտասարդների շրջանում անցկացնել ֆուտբոլի «Արմավիրի մարզպետի գավաթ» մրցաշար: Իսկ Փարաքար գյուղական համայնքի ոչ պետական հատվածի ներկայացուցիչ Սոնա Քեյանը առաջարկեց երիտասարդների շրջանում անցկացնել ինտելեկտուալ մրցույթ: Առաջարկներն արժանացան խորհրդի մյուս անդամների հավանությանը:

Որոշվեց՝

Հաջորդ հանդիպմանը կոնկրետ ծրագիր ներկայացնել նշված ուղղություններով միջոցառումներ անցկացնելու մասին:

Խորհրդի նախագահ՝

Ա. Ղահրամանյան

Խորհրդի քարտուղար՝

Ա Ավետիսյան